

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ ԿԱՄԱՐ 2 2022 թ. ՀԱՄԱՐ 2
НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ
SCIENTIFIC INFORMATION

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Աշնանային Գյումրին Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հերթական միջազգային գիտաժողովի հարյուրավոր մասնակիցներին դիմավորեց գյումրիական ջերմությամբ: Մեկտեմբերի 23-ին բացվող այս գիտաժողովին կազմակերպիչը՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը ինչպես միշտ, նախապատրաստվել էր պատասխանատվությամբ ու սիրով: Նախ, որ այն մեր երկրի պատմության վերջին 30-ամյակում անընդմեջ՝ 11-րդ անգամ գումարվող հայագիտական եզակի միջոցառումներից մեկն է՝ իր մշտական ու անընդհատ ավելացող մասնակիցների մեծ քանակով, արտերկրի մի քանի տասնյակ հայագետների ամենագործուն մասնակցությամբ, այն նաև Գյումրու մտավորականության կյանքում սպասվող կարևոր իրադարձություն է, որի շնորհիվ Գյումրին՝ արվեստների ու արհեստների, ազգային երգ-երաժշտության ու սպորտի քաղաքը, այսօր նաև գիտության քաղաքի ազնիվ անունն է կրում:

«Մեր նախորդ հանդիպումից անցել է երեք տարի.- իր ողջույնի խոսքում նշեց հայագիտական կենտրոնի տնօրեն Ա. Հայրապետյանը, - Այս ընթացքում աշխարհում շատ բան է փոխվել: Անփոփոխ է մնացել թերևս մեր կամքը՝ երեք տարին մեկ հավաքվել Գյումրիում, քննարկելու համար Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության արդի վիճակը, ուրվագծելու հայագիտության ընդհանուր համատեքստում գավառի հարուստ ազգագրության, բանահյուսության, պատմության, արհեստների ու արվեստների ուսումնասիրության հետագա ընթացքն ու առաջնահերթությունները:»



Միջազգային գիտաժողովի հարյուրավոր մասնակիցները իրենց խոնարհումը բերեցին ադրբեջանական վերջին ազրեսիայի արդյունքում գոհված հայորդիների հիշատակին, ապա մասնակիցներին ողջունեցին ու գիտաժողովին հաջող ընթացք ու արդյունավետություն մաղթեցին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժան-

կան ու մշակութային կյանքի, նաև բարոյահոգեբանական վիճակի՝ վայրիվերումներով լի պատկերի գիտական ուրվագծում:

Ալեքսանդրապոլի տնտեսական զբաղմունքների, տնտեսվարման օժանդակ ձևերի, արհեստների, համքարությունների, կենցաղի, բնակարանի, ծիսատոնական համակարգի, բառուբանի յուրահատկությունների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների հիմքի վրա Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի պատմագագարական ծավալուն հետազոտություն, «աղետի բանահյուսության» ու նրա փոխակերպումների, ժողովրդական տոների ու ծիսակատարությունների ձևափոխությունների հարցերի քննություն, Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցի, XX դ. կեսին Լենինականում ստեղծագործած գուսանների վաստակի ըստ ամենայնի արժևորում, Գյումրիում և գյուղական բնակավայրերում ժողովրդական երգի ու պարի կատարումների արդի փոխակերպումների քննություն, կենտրոնի վաղամեռիկ գիտաշխատողներին նվիրված հանրապետական ամենամյա հայագիտական ընթերցումների, ազգագրական և ծիսական տոնակատարությունների կազմակերպում, բազմաթիվ մենագրությունների, գիտական հոդվածների, գիտաժողովների նյութերի, վերջապես ՀՀ ԲՈԿ-ի ցուցակում գտնվող «Գիտական աշխատություններ» պարբերականի շուրջ 3 տասնյակ հատորների հրատարակում, արդյունավետ համագործակցություն տարբեր գիտական կենտրոնների հետ և այլն: Կենտրոնի կողմից կազմակերպվող միջոցառումներից շատերը վերածվել են բարի ավանդույթի. հայագիտության դասեր մարզի տարածքում տեղակայված զինմասերում, ամեն աշուն Գյումրիին զարդարող «Հացի տոն» ազգագրական փառատոներ, երիտասարդ գիտնականի ամառային դպրոցներ, ազգագրական գիտարշավներ, գիտական ընթերցումներ և այլն:

Թվարկված և բազմաթիվ այլ իրողություններով է հյուսված 25-ամյա կենտրոնի պատմությունը, որը սեպտեմբերի 23-24-ին հարստացավ հորելյարին արժանի և ս մեկ ձեռքբերումով՝ ավանդաբար հրավիրվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» խորագրով միջազգային 11-րդ գիտաժողովով: Ողջունելով այն՝ ԳԱԱ հայագիտության և ՀԳ բաժանմունքի ղեկավար, ակադեմիկոս Յու. Սուվարյանը կարևորեց նման գիտաժողովների նշանակությունը հայագիտության զարգացման բնագավառում, մարզպետ Ն. Բաղդասարյանի խոսքում առանձնակի կարևորվեց մարզում երիտասարդ հայագետների պատրաստման գործում այսպիսի գիտական միջոցառումների և նրա կազմակերպչի՝ Շիրակի ակադեմիական կենտրոնի ղեկը: Սամցխե-Ջավախքի պետական համալսարանի ռեկտոր Մ. Բերիձեն ընդգծեց իրենց բուհում Շիրակի կենտրոնի գիտնականների դասատվության կարևոր նշանակությունը և իրենց լավագույն շրջանավարտներին կենտրոնի հետ կապելու անհրաժեշտությունը:

Անդրանիկ լիագումար նիստում մեծ ուշադրությամբ լավեցին բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Դ.Գասպարյանի «Չարենցն ու պատմականությունը», Գ.Աղանյանի «Ալեքսանդրապոլի քաղաքային համայնքը 1890-1910-ական թվականներին», արվ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ասատրյանի «Գ.Լևոյանը և երաժշտության հարցերը «Գեղարվեստ» հանդեսի էջերում» զեկուցումները: Գիտական արդյունավետ աշխատանքի համար կենտրոնի մի շարք գիտաշխատողներ արժանացան ՀՀ ԳԱԱ նախագահության, Շիրակի մարզպետարանի ու Գյումրու քաղաքապետարանի պարգևների:

Կենտրոնի աշխատակազմի և գիտաժողովի մասնակիցների անունից տնօրեն Ա. Հայրապետյանը խորին երախտագիտություն հայտնեց գիտաժողովի կայացմանն էապես աջակցած ՀՀ Նախագահ Վ. Խաչատրյանին, ԳԱԱ նախագահ Ա.Սաղյանին, Շիրակի մարզպետ Ն. Բաղդասարյանին, Գյումրու քաղաքապետ Վ. Սամսոնյանին գիտության հանդեպ նրանց ցուցաբերած հոգատարության համար:

Ընդմիջումից հետո գիտաժողովի աշխատանքներն ընթացան 5 մասնաճյուղերում.

Հնագիտության և վիճակագրության մասնաճյուղային նիստը տևեց մինչև ուշ երեկո: Տրամադրող էին և՛ գիտնականներով ու ուսանողներով լի լսարանը, և՛ օրվա 10 զեկուցումների ուշագրավ թեմաները, որոնց շուրջ ծավալվեցին արդյունավետ քննարկումներ:



Բանավեճի և ակտիվ քննարկման ոգով անցավ պատմագիտության մասնաճյուղի առաջին օրվա նիստը, որին մասնակցելու էին եկել նաև ԾՊՀ հումնիտար մասնագիտությունների և պատմության ֆակուլտետի բազմաթիվ ուսանողներ, մարզի դպրոցների պատմության ուսուցիչներ:

Ազգաբանության մասնաճյուղի առաջին նիստը նույնպես բովանդակալից անցավ, լսվեցին 9 զեկուցումներ, որոնցից 7-ի հեղինակները ԳԱԱ ՀԱԻ ազգագրագետներն էին, զեկուցումների առյուծի բաժինը՝ շիրակյան թեմաներով էր՝ տնտեսություն, ժողովրդագրություն, կենցաղ, սովորույթներ:

4-րդ՝ արվեստագիտության և ճարտարապետության մասնաճյուղի առաջին օրվա նիստում բազմաթիվ ուսանողներ կային կոնսերվատորիայի ու գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղերից: Շատերին էին հետաքրքրում Գյումրու 100-ամյա նկարչական դպրոցի պատմությանը, գյումրիաբնակ հայրենադարձ նկարիչների հետագա ճակատագրին, Գարեգին Լևոնյանին, Գ.Տիգրանովի «Նամուս» օպերային, գյումրիական օրորերգերին վերաբերող հարցերը: Հետաքրքրությամբ լսվեցին և քննարկվեցին Տայքի պատմաճարտարապետական հուշարձանների արդի վիճակի, Անի քարանձավային համալիրների նորագույն ուսումնասիրության և այլ հարցեր:

Գիտաժողովի առաջին օրը բազմամարդ էր նաև 5-րդ՝ բանասիրության մասնաճյուղի նիստը: Տոն տվողները գերազանցապես ԳԱԱ լեզվի ինստիտուտի, Ծիրակի հայագիտականի գիտաշխատողներն էին, նաև ԾՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի լեզվաբանները:

Արդեն ուշ երեկո էր, երբ ավարտվեցին վերջին զեկուցումները: Առջևում ևս մեկ աշխատանքային օր կար՝ նույնքան հագեցած, նույնչափ հետաքրքիր: Նախորդ օրվա գրեթե բոլոր զեկուցողները տեղում էին, ավելացել էին նրանք, ովքեր հանդես էին գալու երկրորդ օրվա նիստերին, որտեղ ընդհանուր առմամբ լսվեց շուրջ 50 զեկուցում: 9-ը հնագիտության, 14-ը պատմագիտության, 7-ը բանագիտության և թանգարանագիտության, 10-ը բանասիրության գծով: Ունկնդիրների մեջ կրկին շատ էին ուսուցիչները և ուսանողները:

Երեկոյան լիագումար նիստում մասնաճյուղերի համանախագահների կողմից ներկայացվեցին և ամփոփվեցին գիտաժողովի արդյունքները: Իր եզրափակիչ խոսքում Ծիրակի հայագիտական կենտրոնի տնօրենը գոհունակությամբ ու դրվատանքով ընդգծեց ներկա-

յացված զեկուցումների մեծագույն մասի բարձր որակը, արդիականությունը, հայագիտությանը զբաղվելու լուրջ հավակնություններ ցուցաբերող երիտասարդների թվի նկատելի աճը, նման գիտաժողովների դերը նրանց գիտական հասունացման ճանապարհին:

Նիստի վերջնամասում տեղի ունեցավ համագործակցության երկու նոր հուշագրերի կնքման արարողություն. Շիրակի հայագիտական համագործակցության հուշագիր վավերացրեց ՌԴ հարավային դաշնային համալսարանի սոցիոլոգիայի և տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտի հայագիտության կենտրոնի և Ղազախստանի գիտության կոմիտեի Ա. Մարգուլասի անվան հնագիտության ինստիտուտի ներկայացուցիչների հետ:


Ս. Հայրապետյան

2022թ. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը կազմակերպել և անցկացրել է հետևյալ գիտական միջոցառումները.




03. 06. 2022

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի նախաձեռնությամբ Գյումրիում անցկացվեց «Եզանյանական ընթերցումներ» հնագիտական երկրորդ հանրապետական գիտաժողովը:



05. 07. 2022

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Շիրակի մարզպետարանի և Շիրակի պետական համալսարանի նախաձեռնությամբ կայացան ՀՀ Սահմանադրության օրվան նվիրված «Սահմանադրականության ուղին. մարտահրավերներ և հեռանկարներ» խորագրով գիտական ընթերցումներ:



09. 09. 2022

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և Շիրակի մարզային գրադարանի նախաձեռնությամբ 2022թ. սեպտեմբերի 9-ին Գյումրիում անցկացվեց միջազգային գիտաժողով՝ նվիրված հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Զարենցի 125-ամյակին:

կեսից ավելիի հեղինակները Շիրակի հայագիտականի գիտաշխատողներն են, որոնց պլանային հոդվածների թեմատիկան անմիջականորեն բխում է կենտրոնում իրականացվող «Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ-3» ընդհանուր ծրագրից և տվյալ տարվա համար հաստատվում է ու դառնում հետազոտության թեմա կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Պետրոսյանը արդյունավետությամբ շարունակում է աշխատել մեր հնագույն պատմության մի շարք առեղծվածային դրվագների քննության և գիտական մեկնաբանման վրա: Ժողովածուում զետեղված նրա «Մար տու երկրանունը՝ դաշնային պետության անվանում» հոդվածում պատմական տվյալների ու առասպելաբանական իրողությունների հիման վրա առաջադրվում է Ուրարտու (urartu-«Սրբազան դաշինք») թագավորության՝ իբրև դաշնային պետական կազմավորում ստեղծված լինելու դրույթը՝ այդպիսի ստուգաբանությունը հիմնավորելով նրանով, որ իրականում էլ Ուրարտու թագավորությունը կյանքի է կոչվել շնորհիվ Շուրա, Բիայնա և Տուշպա երկրների փոխադարձ համաձայնության՝ սրբագործված դաշինքի:

Հետաքրքիր ու ծավալուն պատմա-նարտարապետական տեղեկատվություն է պարունակում համահեղինակներ պ.գ.թ. Ա. Ակոպովի և ճարտ.գ.թ. Դ.Նահատակյանի «Ազորդացփոր գավառի պատմա-նարտարապետական հուշարձանների տեղագրության և արդի վիճակի շուրջ» հոդվածը, որում, իբրև հետազոտության արդյունք, ճշգրտված ներկայացվում է Տայքի Ազորդացփոր գավառի տարածքում առայսօր պահպանվող հուշարձանների՝ եկեղեցիներ, վանքեր, բերդեր ու ամրոցներ, տեղադրությունը, որոնցից շատերը վաղ միջնադարի ծնունդ են և կազմում են հայոց պատմամշակութային ժառանգության անկապտելի մաս:

Պատմաբան Գ.Այվազյանը, որ ծրագրի շրջանակներում շարունակում է Ալեքսանդ-

րապոլի կրթամշակութային կյանքի նոր, անձանոթ էջերի լուսարանումը, այս անգամ ընթերցողներին է ներկայացել «Ալեքսանդրապոլի դպրոցների պատմությունն աշակերտների հիշողություններում» հաղորդմամբ, որով բավականին խոսուն՝ ներկայացնում է 19-րդ դ. երկրորդ կեսի քաղաքն իր կրթական կյանքի վայրիվերումներով:

Երկրամասի կյանքում բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ Անդրկովկասյան երկաթուղու շինարարությունը, որի հայկական հատվածի իրականացմանը նվիրված իր առանձին ուսումնասիրության շրջանակներում պ.գ.թ. դոցենտ Ա. Հայրապետյանը ներկայացել է «Դրվագներ Անդրկովկասյան երկաթուղու շինարարության պատմությունից» գիտական հոդվածը՝ համադրելով գիտական գրականության տվյալներ, մեծաթիվ արխիվային վավերագրեր և պարբերական մամուլի հաղորդումներ: Այն նաև սկիզբ է դնում Հայկական երկաթուղու շինարարության ամբողջական պատմության, որ ձեռնարկել է հեղինակը:

Կենտրոնի գիտահետազոտական աշխատանքների հնգամյա ծրագրի շրջանակներում շարունակվում է թուրքական գինակալման շրջանում Ալեքսանդրապոլի ու գավառի քաղաքական կյանքի պատմության հանախ վիճահարույց դրույթների նորովի ուսումնաքննությունը, որ ժողովածուում ներկայացված է կենտրոնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Կ.Ալեքսանյանի «Տեղական իշխանության մարմինների գործունեությունը Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-դեկտեմբերին» հոդվածով:

Հայ միջնադարյան պատմագրության երևելի ներկայացուցիչներից մեկի՝ Կիրակոս Գանձակեցու Պատմությունը՝ որպես մոնոդոլական արշավանքների ուսումնասիրության սկզբնաղբյուր են ներկայացրել և արժևորել համահեղինակներ դոցենտ Ա. Գասպարյանն ու Կ.Մովսեսյանը: «Շիրակն առևտրական ճանապարհների վրա» հոդվածի հեղինակ Վ.Բոյանը, տարածաշրջանից հավաքված դրամագիտական հարուստ նյութի վկայմամբ Շիրակը տարանցիկ ճա-

նապարհներով կապված համարելով հարևան երկրներին և նրանց միջոցով համաշխարհային առևտրի գլխավոր մայրուղիներին, դրա հիման վրա հետաքրքիր տեղեկություններ է հայտնում տարածքի 16-18դդ. առևտրատնտեսական վիճակի ու հարաբերությունների մասին:

Ժողովածուի ազգագրական-բանահյուսական հենքը կազմում են 3 աշխատանքներ: Կենտրոնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Կ.Բագեյանի հոդվածը նվիրված է Ծիրակի պանրագործական մշակույթին (համահեղինակ՝ Գ.Աղանյան), կենցաղավարող պանրատեսակների ծագումնաբանությանը և պատրաստման ավանդական ու արդիական եղանակներին: Հմայական բանահյուսության նախնական տեսակներից մեկի՝ անեծքի և ժողովրդական բանավեստի այլ տեսակների առնչություններին է նվիրված ԳԱԱ ՀԱԻ գիտաշխատող, պ.գ.թ. Լ.Ղեզյանի «Անեծքը հայկական ժողովրդական երգերում. հայրեններ, անտուններ, խաղիկներ» հոդվածում: Կենտրոնի գիտաշխատող, բան. գիտ. թեկնածու Հ. Մատիկյանի «Գ.Սրվանձտյանցի մանկաշխարհին առնչվող գրառումները» աշխատանքը ծանոթացնում է ականավոր ազգագրագետի տարբեր առիթներով գրի առած հրաշալի բանահյուսական պատմիկներին, որոնք առնչվում են հայոց մանկանոցին: Հեղինակն իրավամբ կարծում է, որ Սրվանձտյանցի «գրառումները, նաև նրա հեղինակային խոսքը, անշուշտ, նպաստաբեր են բանահյուսական տեքստերի խորքային և բազմաշերտ ուսումնասիրությանը»:

Պարբերական ժողովածուի վերջին պրակում ներկայացված են բանասիրության ոլորտին վերաբերող մի քանի աշխատանքներ: Հմուտ լեզվաբան Լավիկ Խաչատրյանի՝ հին հայերենի քերականական մասնիկների պատմական դիրքափոխությանը նվիրված արժեքավոր դիտարկումների և ԾՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, փորձաշատ հոգեբան Կ. Սահակյանի «Բանաձևային կայուն դարձվածների ազդեցությունը անձի ինքնապաշտպանական մեխանիզմների

հզորացման գործընթացում» աշխատանքի կողքին տեղ են գտել ասպիրանտների մի քանի գիտական հոդվածներ (Հ.Թորոսյան, Ա.Վարդանյան, Լ.Գրքիկյան), որոնք նախապես արժանացել են հեղինակավոր գրախոսների բարձր գնահատականին:

Բանավեճի դուռ է բացում Արթուր Միրզոյանի «Օրինտալիզմի խնդիրը և «Արևելքի» կառուցարկումը Հովի. Թումանյանի ստեղծագործության և հրապարակախոսության մեջ» հոդվածը՝ հարուստ հետաքրքիր դիտարկումներով:

Գրականագիտական թարմ զգացողություններ է ընթերցողին պարզևում գիտաշխատող, ճանաչված բանաստեղծ Ռոզա Հովհաննիսյանի «Ջաննի Ռոդարիի հեքիաթագրության առանձնահատկությունները» գիտական հոդվածը:

Հաջորդ աշխատանքները վերաբերում են արվեստի ու ճարտարապետության գանազան հարցերի՝ 17-19-րդ դդ. հայկական սրբապատկերներում Խորհրդավոր ընթրիքի աստվածաշնչյան թեմայի գեղարվեստական արձանագրումներին (հայցող Թամար Դադայան): Առաջ է քաշվում և հիմնավորվում այն դիտարկումը (արվեստ. թեկն., դոցենտ Արաքս Մարգարյան), որ Պորտասարի հնագիտական մեծարժեք հուշարձանի (հայկական Եղեսիա) ծագման և խորհրդարանության վերաբերյալ բազմաթիվ վարկածների վերծանման իրական բանալին «հուշարձանը ստեղծող էթնոսի մշակույթի ու գիտելիքների համատեքստն է»: Հետազոտական խումբը (ճարտ.գ.թ. Դավիթ Նահատակյան, պ.գ.թ. Արկաղի Ակոպով, Անի Գրիգորյան), որ ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ իրականացվող 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում անդրադարձել է վաղքրիստոնեական հայկական ճարտարապետությունից սերող Եղեգնամորի տանարին՝ անհերքելի փաստերով հիմնավորելով, որ իբրև հայ քաղքեղոնական համայնքի տանար՝ կրելով Տայք-Գուգարքի հայ ճարտարապետական դպրոցի մեծ ազդեցությունը, այն նաև ունի Անի-Ծիրակի

ճարտարապետական մշակույթի ոճական առանձնահատկություններ:

Երևանի հյուրանոցային ճարտարապետության և շինարվեստի խորհրդային փուլի առանձնահատկություններին է նվիրված Անուշ Մադոյանի հրապարակումը: Իր հոդվածում, որ նվիրված է հայոց ողբերգի ժանրային մի քանի առանձնահատկություններին, Կենտրոնի ավագ գիտաշխատող, արվ. թեկնածու Հասմիկ Հարությունյանը իրավամբ եզրակացնում է, որ այն ակն-

հայտորեն կրում է արխայիկ շերտեր ու արտահայտչաձևեր, թեև հայոց հինավուրց ողբական արարողությունը ժամանակի ընթացքում էապես փոփոխվել է: Ն.Տիգրանյանի մշակած մուղամների գեղարվեստական բարձր արժեքի մասին է խոսվում Կոնստանդնուպոլիսի ԳՄ դասախոս Կարապետ Շաբոյանի հոդվածում:

Ս. Հայրապետյան